



«07» ապրիլի 2011թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՅԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 1-ին կայացած նիստի N 4 արձանագրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում մարզի Արևաշող համայնքում բնակելի տուն ստացող ընտանիքների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում ընդգրկված Սանասար և Արա Մագոյանների ընտանիքների հետ բնակելի տների կառուցման համար անհրաժեշտ հողատարածքների առուվաճառքի պայմանագրերը կնքել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Լոռու տարածքային բաժնի կողմից՝

1) Սանասար, Մարգպետ, Սուրեն, Սերոբ Մազոյաններին և Լարիսա Նահապետյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի գլխավոր հատակագծի համաձայն 002-010 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասում առկա, նրանց կողմից բնակության համար օգտագործվող ժամանակավոր շինությունը քանդված լինելու մասին կազմված ակտը նախարարություն ներկայացվելուց հետո:


2) Արա, Գոռ, Գոհար Մազոյաններին և Զեփյուռ Սարգսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի գլխավոր հատակագծի համաձայն 002-009 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասում առկա, նրանց կողմից բնակության համար օգտագործվող ժամանակավոր շինությունը քանդված լինելու մասին կազմված ակտը նախարարություն ներկայացվելուց հետո:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան

Իսկականի հետ ճիշտ է



<< 07 >> ապրիլի 2011թ.

Հավելված  
 ՀՀ քաղաքաշինության նախարարի  
 2011 թվականի ապրիլի 02-ի  
 N 46 հրամանի

**ՑՈՒՑԱԿ**

«Հ Լոռու մարզի Արևաշող համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակելի տուն ստացող ընտանիքների

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալներ	Անձերի թիվը	Կառուցվող բնակելի տան սենյակների թիվը
1	Մազոյան Սանասար	1962թ.	AB 0573093, տրված 23.10.1997թ., 052-ի կողմից	5	3
	Նահապետյան Լարիսա	1962թ.	AB 0573233, տրված 24.10.1997թ., 052-ի կողմից		
	Մազոյան Մարգարետ Սանասարի	1985թ.	AH 0418843, տրված 03.08.2007թ., 052-ի կողմից		
	Մազոյան Սուրեն Սանասարի	1987թ.	AG 0426382, տրված 24.02.2005թ., 052-ի կողմից		
	Մազոյան Սերոբ Սանասարի	1990թ.	AG 0653797, տրված 22.03.2006թ., 052-ի կողմից		
2	Մազոյան Արա	1966թ.	AB 0573094, տրված 23.10.1997թ., 052-ի կողմից	5	3
	Սարգսյան Ջեփյուռ	1968թ.	AB 0573229, տրված 24.10.1997թ., 052-ի կողմից		
	Մազոյան Գոռ Արաի	1989թ.	AH 0315878, տրված 26.01.2007թ., 052-ի կողմից		
	Մազոյան Գոհար Արաի	1990թ.	AH 0583134, տրված 16.05.2008թ., 052-ի կողմից		
	Մազոյան Իսկուհի Արաի	1995թ.	ԱԱ N018727		

*Ստեփանյան*